ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոս, 2019 թվականի № 42-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 52-Լ ՈՐՈՇՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՐՔԲԵՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ ու 84-րդ հոդվածների և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» N 52-Լ որոշման № 2 հավելվածը փոփոխել՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

2. Հաստատել Ընկերության կողմից ներկայացված ռադիոհաղորդումների և դրանց հեռարձակման իրավունքների ձեռքբերման նախահաշվի փոփոխությունը՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածում ներկայացված նախահաշվի:

3. Հաստատել Ընկերության կողմից ներկայացված ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման նախահաշվի փոփոխությունը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

4. Հիմք ընդունելով սույն որոշման 1-3-րդ կետերի իրականացումից բխող, ինչպես նաև Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2019թ. օգոստոսի 20-ի № 41-Լ որոշման իրականացումից բխող և Ընկերության ընթացիկ գործունեության հետ կապված այլ դրամական մուտքերն ու ելքերը և եկամուտներն ու ծախսերը՝ հաստատել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018թ. դեկտեմբերի 28-ի № 49-Լ որոշմամբ հաստատված Ընկերության եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածի, եկամուտների և ծախսերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 5 և դրամական հոսքերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 6 հավելվածի:

5. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

6. Սույն որոշման 1-ին կետով սահմանված փոփոխությունները գործողության մեջ դնել 2019 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

20 օգոստոս, 2019 թվականի

ք. Երևան